



21-րդ դար

«ՆՈՐԱՎԱՆՔ» ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՀԱՆՐԵՍ



CALOUSTE
GULBENKIAN
FOUNDATION

*Հրատարակվում է
Գալուստ Գյուլբենկյան հաստատության
մասնակի մեկենասությամբ*

1 (41)

ԵՐԵՎԱՆ

2012

ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԻԱԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ

Արամ Մանուկյան

Որոշ երկրներում հասարակական-քաղաքական, տնտեսական ճգնաժամերի պայմաններում իշխանությունը կենտրոնացնելու պահանջ է առաջանում, որը, որպես կանոն, հանգեցնում է միանձնյա կամ միակուսակցական կառավարմանը: Բազմաթիվ օրինակներ կան համաշխարհային պատմության մեջ: Հիշենք Անգլիան և Ֆրանսիան բուրժուական հեղափոխությունների ժամանակ, Ռուսաստանը սոցիալիստական հեղափոխությունից հետո և այլն: Ընդ որում, այդ կենտրոնացումն իր հետ բերում էր անհատի կամ կուսակցության դիկտատուրա՝ տարբեր ձևերով արտահայտված: Դրա հաստատումը մենք տեսնում ենք Հայաստանի Առաջին հանրապետությունում, որտեղ, արտաքնապես բազմակուսակցության պայմաններում, սկզբում գործում էր Դաշնակցություն կուսակցության քողարկված միակուսակցական կառավարումը, իսկ դրոյան ծայրահեղ լարվածության պայմաններում՝ այդ կուսակցության բացահայտ դիկտատուրան [1, էջ 30]:

Մի փոքր այլ պայմաններում նման գործընթացներ են տեղի ունենում նաև Խորհրդային Հայաստանում, որը շատ կարճատև ձևական անկախությունից հետո դառնում է ամբողջատիրական տերության մաս: Ինչպես հայտնի է, ամբողջատիրական վարչակարգը, միակուսակցական կառավարման համակարգ ունենալուց բացի, բնորոշվում է նաև բացառիկ անհանդուրժողականությամբ ցանկացած այլախոհական դրսևորումների

¹ ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտի ասպիրանտ:

հանդեպ: Սակայն իրական կյանքում հնարավոր չէ բացարձակապես արգելել ազատ միտքը, և միշտ էլ գտնվել են ու կգտնվեն անհատներ, ովքեր կընդվզեն նման իրավիճակի դեմ: ԽՍՀՄ-ում այն ընդունեց այլախոհության բնույթ, որը ձևավորվեց 1960-ականներին և գոյատևեց մինչև այդ պետության փլուզումը: Ինչպես իրավացիորեն նկատել է այդ շարժման ճանաչված գործիչ և Խորհրդային Միության այլախոհության պատմությանը նվիրված գրքի հեղինակ Լյուդմիլա Ալեքսեևան, այլախոհական շարժումը ԽՍՀՄ-ում զանգվածային բնույթ չունեց, մասնատված էր և իրականում ի վիճակի չէր էական ազդեցություն ունենալ երկրի հասարակական-քաղաքական կյանքի վրա [2]: Իտալացի հետազոտող Ջուզեպե Բոֆան ԽՍՀՄ այլախոհությունը պայմանականորեն բաժանում է երեք ուղղությունների՝ լենինյան-կոմունիստական, ազատական-ժողովրդավարական և կրոնաազգային [3, c. 88]:

Հասկանալի է, որ Հայաստանում նույն իրավիճակն էր: Սակայն, եթե Խորհրդային Միության չափանիշներով այդ շարժումը մեծ մասամբ ուղղված էր վարչակարգի դեմ՝ հասարակական-քաղաքական կարգը փոխելու կամ բարեփոխելու նպատակով, ապա Հայաստանում այն հիմնականում ազգային բնույթ էր կրում [4]:

Անգամ Հայրենական պատերազմի տարիներին Հայաստանում բացահայտված երկու ընդհատակյա իրական կազմակերպությունների հիմնական նպատակն անկախ Հայաստանի ստեղծումն էր: Այսպես, օրինակ, 1942թ. Հայաստանի ՆԳԺԿ մարմինները բացահայտում են Երևանի պետական համալսարանի պատմության ֆակուլտետի 4-րդ կուրսի ուսանող Պավել Լիսիցյանի գլխավորությամբ գործող մի ընդհատակյա կազմակերպություն, որի 30 անդամները դատապարտվեցին տարբեր պատժաչափերի, այդ թվում 11-ը՝ մահապատժի: Այդ կազմակերպությունը գործել է 1940 թվականից և անվանվել է «Ազգային փրկության կոմիտե», որն ուներ ծրագիր [5, գ. 10313, հ. 1-4]:

Նույն տարի բացահայտվել է նաև մեկ այլ դաշնակցական ընդհատակյա կազմակերպություն՝ Հրաչ Մուրադյանի գլխավորությամբ, որի կազմում 89 մարդ կար: Այս կազմակերպությունը տարածված էր հանրապե-

տության մի շարք շրջաններում, ուներ ծրագիր, կենտրոնական կոմիտե, կապ էր հաստատել արտասահմանի դաշնակցականների հետ, ուներ դրամական հիմնադրամ, որը ձևավորվում էր անդամավճարներով և արտասահմանից ստացված 5000 ռուբլով, կազմակերպությունում կային վճարովի աշխատողներ և այլն: Գաղափարախոսությունը դաշնակցական էր [5, գ. 10253, թ. 92-99]: Հարկ է նաև հատուկ նշել 1965թ. ապրիլի 24-ին ժողովրդական գանգվածային շարժումը Երևանում, որի պահանջներից էր նաև հայկական պատմական տարածքների միավորումը [6]:

Հետագա տարիներին, ամբողջատիրական կառավարման պայմաններում, Հայաստանում չստեղծվեցին գանգվածային այլախոհական կազմակերպություններ, և մինչև ԽՍՀՄ փլուզումը ազգային մտածողության, ազգային արժեքների պահպանման գործառնությունը հիմնականում կատարեց հանրապետության մտավորականությունը, որի արդյունքները վառ արտահայտվեցին Ղարաբաղյան շարժման տարիներին:

Հարկ է նշել, որ արտասահմանում գործող ՀՅԴ կուսակցությունը, մնալով խորհրդային կարգերի հակառակորդը, 1930-ական թթ. սկզբներից, իր ղեկավար մարմնի որոշումից հետո, որևէ հակախորհրդային գործողություն չիրականացրեց ՀԽՍՀ տարածքում: Սակայն նրանց գաղափարախոսությունը, որն ամբողջովին ազգային էր, այսպես, թե այնպես պահպանվեց Հայաստանում: Սակայն դրա համար նրանցից չպահանջվեցին ինչ-որ ջանքեր, քանի որ այդ գաղափարներն ապրում էին Հայաստանում բնակվող, առաջին հերթին, հայ մտավորականության, ինչպես նաև պետական-քաղաքական այրերի որոշակի մասի, բնականաբար, հասարակական մյուս լայն շերտերի մեջ: Հայկական սփյուռքում դաշնակցության էական ազդեցություն ունենալու հանգամանքով, թերևս, կարելի է բացատրել այն իրողությունը, որ Հայաստանի կոմունիստական կուսակցության տարբեր միջոցառումների ժամանակ քննադատվում էին հատկապես դաշնակցություն կուսակցությունը, նրա հակախորհրդային գաղափարախոսությունը: Հայաստանի կոմունիստական կուսակցության գրեթե բոլոր համագումարներում հնչում է այդ քննադատությունը: Դա, անկասկած, կրում էր նաև ինտերցիոն բնույթ, որը գալիս էր կոմունիստների ու դաշնակցականների անհաշտ

հակամարտությունից՝ սկսված 1910-ական թվականների վերջից, մինչև 1930-ական թվականները: Հայաստանում հալածյալ կուսակցության համբավը նույնպես իր դերակատարությունն ունեցավ 1991թ. անկախությունից հետո այդ կուսակցության բավական արագ ձևավորման գործում, որն առայսօր իր ուրույն տեղն ունի հանրապետության քաղաքական կյանքում:

Երկար տարիներ բազմակուսակցության բացակայությունը բացասական ազդեցություն թողեց Հայաստանի Երրորդ հանրապետության հասարակական-քաղաքական կյանքի վրա: Դրա առաջին արտահայտությունը եղավ կուսակցությունների ստեղծման շքերթը: Երրորդ հանրապետության կայացման առաջին տարիներին նրանց թիվն անցնում էր 150-ից: Այդ իրողությունը, մի փոքր մեղմացած, պահպանվում է նաև ներկա ժամանակներում: Որոշակի օրենսդրական նորամուծություններից հետո, որոնք կոնկրետ պահանջներ դրեցին գործող և ձևավորված կուսակցությունների առջև, նրանց թիվը կրճատվեց և հասավ մոտ 65-ի: Հասկանալի է, որ նրանցից ոչ բոլորը կարողացան էական մասնակցություն ունենալ նորանկախ Հայաստանի հասարակական-քաղաքական կյանքում: Քաղաքագետ-պատմաբան Ա.Ենգոյանը գտնում է, որ ժամանակակից Հայաստանում ինչ-որ չափով արգելակվել է կուսակցական-պառլամենտական կառույցների ձևավորումը, որն ունի նաև օբյեկտիվ պատճառներ: Դրանցից մեկն այն է, որ նոր ձևավորվող կուսակցությունները դեռևս հասուն չեն և չունեն իրական արմատներ հասարակության մեջ [7, c. 198]:

Անցած տարիների միակուսակցական կառավարման համակարգի գաղափարաքաղաքական կյանքի և սովորույթի ազդեցությունը որոշակի կնիք է թողել Հայաստանի, իրականում նաև հետխորհրդային բոլոր նորանկախ պետությունների կուսակցական շինարարության, ինչպես նաև ժողովրդավարական այլ ինստիտուտների ձևավորման վրա: Այսպես, կուսակցությունները և կազմակերպությունները, որպես կանոն, կազմավորվում էին առանձին անհատ-առաջնորդների շուրջ՝ հիմնական նպատակ ունենալով գուտ իշխանության լծակներին տիրանալը ցանկացած պայմանով [8, c. 43]:

Նույնը նկատելի է նաև Հայաստանի նորանկախ հանրապետությունում, որտեղ Արցախյան հզոր ալիքի վրա ձևավորված Հայոց համազգային շարժում կազմակերպության հիմքի վրա ստեղծվեց նույնանուն կուսակցությունը Ղարաբաղյան շարժման առաջնորդների շուրջ, իսկ նրանց միացած այլ կուսակցություններն ու կազմակերպություններն առանձնացան այլ անձանց գլխավորությամբ, որով սկզբնավորվեց նորանկախ Հայաստանի բազմակուսակցական համակարգը: Առաջին շրջանում քաղաքական կյանքում հիմնական դերակատարությունը կատարում էին երկու կուսակցություններ՝ ՀՀԾ-ն և ՀԿԿ-ն, սակայն, ժամանակի հետ կտրուկ նվազեցին Հայաստանի կոմկուսի ազդեցությունը և դերակատարությունը: Մինչև 1998թ., չնայած արտաքին բազմակուսակցական համակարգի գոյությանը, երկրում փաստացի սկսեց գործել ՀՀԾ մենիշխանությունը:

Բնականաբար, խորհրդային երկրի փլուզումից հետո առաջացած նորանկախ բոլոր պետությունները հայտարարեցին ժողովրդավարության ուղին ընտրելու մասին: Դա հաստատվեց նրանց գրեթե բոլորի կողմից ընդունված սահմանադրություններում: Կատարվեցին նաև ինստիտուցիոնալ ու որոշակի համակարգային փոփոխություններ, սակայն, ինչպես և սպասելի էր, դրանք չտվեցին և չէին կարող միանգամից տալ ցանկալի արդյունքներ: Եթե ժողովրդավարացման գործընթացներն առավել արդյունավետ էին Մերձբալթյան երկրներում, ապա դրանք բավական դանդաղ են ընթանում մյուս անկախացած հանրապետություններում, այդ թվում և Հայաստանում: Մերձբալթյան պետություններն առանձնանում են մյուս անկախացած երկրներից առաջին հերթին նրանով, որ համեմատաբար քիչ ժամանակահատվածում են գտնվել Խորհրդային Միության կազմում, ունեցել են ժողովրդավարության պայմաններում ապրելու որոշակի փորձ, ավելի լավ էին պատրաստված ապրելու շուկայական հարաբերությունների պայմաններում և, ինչը պակաս կարևոր չէ, ավելի շոշափելի օգնություն ստացան Արևմուտքից: Սակայն, անգամ արևմտյան երկրների կողմից բացարձակ օժանդակություն ստացած Վրաստանում չի հաջողվում արագ անցումն իրական ժողովրդավարությանը: Պատճառները բազմաթիվ են, իսկ ներկա իրավիճակը, ինչպես նշեցինք, բնութագրական է բոլոր հետխորհր-

դային պետությունների համար, այսինքն՝ կրում է օրինաչափ բնույթ: Այնուամենայնիվ, կարելի է առանձնացնել այդ պատճառներից մի քանիսը, որոնք ընդհանուր են գրեթե բոլորի համար: Կարևորներից մեկը Խորհրդային Միության միակուսակցական, ամբողջատիրական համակարգի պայմաններում անցկացրած տարիների ազդեցությունն է կյանքի բոլոր ոլորտների, առանձնապես գիտակցության վրա, ինչը շատ դեպքերում թելադրում է այս կամ այն վարքագիծը կյանքում և հատկապես կառավարման համակարգում: Մյուսն, անկասկած, այն ծանր ներքին ու արտաքին պայմաններն են, որոնցում հայտնվեցին հետխորհրդային երկրները: Հայաստանը, օրինակ, ոչ իր կամքով հայտնվեց պատերազմական իրավիճակում, ինչը շարունակվում է մինչև այժմ: Պատերազմական կամ կոնֆլիկտային իրավիճակում հայտնվեցին փաստորեն գրեթե բոլոր հանրապետությունները, այդ թվում՝ Ռուսաստանը, Վրաստանը, Մոլդովան, Միջին Ասիայի հետխորհրդային երկրները և այլն: Հայաստանում և մյուս հանրապետություններում առաջացան լուրջ տնտեսական խնդիրներ, որոնց հաղթահարումն ընկավ նոր, հիմնականում անփորձ իշխանությունների ուսերին:

Կային նաև բազմաթիվ այլ սուբյեկտիվ պատճառներ: Այս ամենն օբյեկտիվորեն կառավարման կենտրոնացում էր պահանջում՝ ժողովրդավարության ճանապարհն ընտրած հանրապետությունների համար արտաքինապես բազմակուսակցական համակարգի առկայություն, իսկ իրականում՝ միակուսակցական կառավարման դրսևորում: Վերջինս, իր հերթին, տանում է փաստացի իշխող կուսակցության առաջնորդի ձեռքում իշխանության լծակների կենտրոնացմանը, որն արտահայտվում է իշխանության մյուս թևերի համեմատ նախագահական իշխանության ուժեղացմամբ: Դրա արմատները գնում են դեպի խորհրդային տարիները, և հասկանալի է, որ, ուզենք, թե չուզենք, որոշակի ժամանակ է անհրաժեշտ այդ կարծրատիպերը հաղթահարելու և իրական ժողովրդավարական կառավարում ձևավորելու համար:

Հունվար, 2012թ.

Աղբյուրներ և գրականություն

1. *Քաջազնունի Հովհ.*, Հ.Յ.Դաշնակցությունը անելիք չունի այլևս, Ե., 1994:
2. <http://www.memo.ru/history/diss/books/index.htm> (Алексеева Л.М., История инокомыслия в СССР, Вильнюс-М., 1992).
3. *Бюффа Дж.*, От СССР к России, М., 1966.
4. *Մանուկյան Ա.*, Քաղաքական այլախոհությունը Հայաստանում 1950-1988թթ., Ե. 2006:
5. ՀՀ ԱԱԾԱ, ԿԳՖ (Հայաստանի Հանրապետության Ազգային անվտանգության ծառայության արխիվ, Կարճված գործերի ֆոնդ):
6. Հայոց ցեղասպանության 50-ամյակը և Խորհրդային Հայաստանը, խմբ. Հարությունյան Գ., Ե., 2005:
7. *Енгоян А.П.*, Идеологические основы социально-политических трансформаций в постсоветской Армении, Е., 2011.
8. Политический процесс: основные аспекты и способы анализа, под ред. Мелешкиной Е.Ю., М., 2006.

ФОРМИРОВАНИЕ И ПОСЛЕДСТВИЯ ДЕЯТЕЛЬНОСТИ ОДНОПАРТИЙНОЙ СИСТЕМЫ ПРАВЛЕНИЯ СОВЕТСКОЙ АРМЕНИИ

Արամ Մանուկյան

Резюме

В 1920-1930-х гг. в Армении установилась Советская власть и сформировалась однопартийная система правления, которая практически не менялась до середины 1980-х гг. Тоталитарная, однопартийная форма правления серьезным образом отразилась на политическом поведении, психологии современного гражданина независимой Армении и, естественно, отрицательно сказалась на формировании многопартийной системы правления и всех демократических преобразованиях в республике.